ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

—

Ստացանք բժշկապետ Յովհ. Բ. Գասպարեանից 100 ր.։ Ուրեմն նախկին 177 ր. գումարի հետ («Մշակ» № 216) ունենք այժմ 277 ռուբլի։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Թիֆլիսի բօրսային կոմիտէի կողմից յօբելեանական տօնախմբութիւններին մասնակցելու համար ընտրված են կոմիտէի փոխ-նախագահ Ս. Մանուէլեան, քարտուղար Գ. Խատիսեան և Բ. Բօղդանեան։

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԵՒ ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

I

Սուրբ Մեսրոպ ամենահանճարեղ հայն է և մեծագոյն բարերարը հայոց։ Նրան ենք պարտական մենք մեր ազգի ուրոյնութեամբ. նա հայ ժողովրդի փակ միտքը բացեց, ձեռքը գրիչ տուեց, եղաւ նրա առաջին ուսուցանողը. դարերի ընթացքում նա հայ ազգը ապրեցրեց, դժնդակ օրերին նրան գուրգուրեց, գեղեցիկ ապագայի յոյս ներշնչեց։

Հայոց ազգի գոյութեան ամբողջ պատմութիւնը բաժանվում է երկու մասի. առաջինը՝ Հայկից, Արամից մինչև ս. Մեսրոպ, այսինքն հայ ազգի սկզբնաւորութիւ-